ՕԳՈՍՏՈՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020
AUGUST-DECEMBER

ՏԵՂԵԿԱԳԻՐ
NEWSLETTER

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan
Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia

www.redcross.am
redcross@redcross.am

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍՐԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Ղարաբաղյան հակամարտության սրացման առաջին իսկ օրերից մարդասիրական օգնություն է տրամադրում անվտանգության նկատառումներով Հայաստան տեղափոխված անձանց:

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ ՀՀ կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ, մոբիլիզացված 1300 կամավորների միջոցով, Երևանում և 10 մարզերի 36 համայնքներում մոտ 100 000 անձի տրամադրվել է սննդի, հագուստի, հիգիենիկ պարագաների աջակցություն, առաջին անհրաժեշտության անհատական օգտագործման և անկողնային պարագաներ, բժշկական սարքավորումներ, առաջին օգնության դասընթացներ և արկղիկներ, պլանշետներ, սայլակներ, քայլակներ և ձեռնափայտեր:

ՀԿԽԸ հոգեբաններն ու առաջին օգնության թիմերը հոգեբանական աջակցություն և հոգեբանական առաջին օգնություն են ցուցաբերել ավելի քան 20000 մարդու, այդ թվում՝ վիրավոր զինվորներին և նրանց հարազատներին, ՀԿԽԸ թեժ գծով դիմող անձանց, հակամարտության ընթացքում զոհվածների մարմինների նույնականացման գործընթացներին մասնակցող քաղաքացիներին, ինչպես նաև անհայտ կորածների և գերիների հարազատներին: Խմբային և անհատական աշխատանք է տարվում հյուրանոցներում և պետական հաստատություններում ապաստանած անձանց հետ:

ARCS ASSISTS PEOPLE WHO MOVED TO ARMENIA FOLLOWING NAGORNO KARABAKH CONFLICT ESCALATION

The Armenian Red Cross Society (ARCS) has been providing humanitarian assistance to people who arrived in Armenia in search of safety since the very first days of the escalation of the Nagorno - Karabakh conflict.

The Armenian Red Cross Society, in cooperation with the Government of the Republic of Armenia and local self-government bodies, through mobilized 1300 volunteers provided food, clothing, hygiene items, personal necessities, bedding, medical equipment, first aid courses and boxes, tablets. wheelchairs, walkers and canes to about 100 000 people in Yerevan and 36 communities of 10 regions.

ARCS Psychologists and First aid teams provided psychological assistance and psychological first aid to more than 20000 people, including wounded soldiers and their relatives, ARCS hot line callers, civilians involved in the process of identifying the bodies of those killed during the conflict, people sheltered in state institutions and private houses, to the relatives of the missing persons and captives.

ՀԿԽԸ հատուկ պատրաստված կամավորներն աշխատում են 7 մարզերի 19 համայնքների ժամանակավոր կացարաններում՝ դպրոցներում, մանկապարտեզներում և հյուրանոցներում ապաստանած 1900 երեխաների հետ՝ կազմակերպելով նրանց առօրյան և տրամադրելով հոգեբանական աջակցություն:

ՀԿԽԸ հետվնասվածքային վերականգնողական կենտրոնն իր ամբողջ ներուժն ու մասնագիտական կարողությունները ծառայեցնում է վիրավոր զինծառայողների բուժման, ֆիզիկական և հոգեբանական վերականգնման գործընթացին (250 բուժվող):

Հակամարտության հետևանքով ընտանիքների տարանջատումը կանխելու և տարանջատված ընտանիքների վերամիավորմանը նպաստելու նպատակով ՀԿԽԸ-ն ակտիվացրել է իր «Որոնում» ծառայությունը, որը մինչ օրս ստացել է մոտ 3813 զանգ:

ՀԿԽԸ-ն աջակցում է մասնավոր կացարաններում ապաստանած մարդկանց՝ նրանց համար ապահովելու հիմնական ծառայությունների հասանելիությունը, ինչպիսիք են էլեկտրականությունը, ջեռուցումը և ջուրը, տրամադրելով 363 միլիոն ՀՀ դրամ՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների կոմունալ ծախսերի համար՝ պլանավորելով աջակցությունը շարունակել ձմեռային մյուս ամիսներին:

ARCS trained volunteers work with 1900 children living in temporary shelters in schools, kindergartens, and hotels in 19 communities of 7 regions, organizing their daily lives and providing psychological support.

ARCS Post-Traumatic Rehabilitation Center uses all its potential and professional skills of the staff in the process of treatment, physical and psychological rehabilitation of wounded servicemen (250).

With the purpose of preventing the separation of families as a result of the conflict and restore family links in the ARCS has activated its Tracing Service which has received about 3813 calls up to date.

ARCS supports people accommodated in shelters to continue to have access to such basic services as electricity, heating and water by contributing 363 million AMD to cover November - December utility expenses of private shelters where people currently live. ARCS plans to cover those expenses in all winter months.

ՀԿԽԸի կողմից 295 միլիոն ՀՀ դրամի կանխիկ աջակցություն կտրամադրվի ԼՂ հակամարտության սրացման հետևանքով Հայաստան տեղափոխված անձանց հյուրընկալող ընտանիքներին՝ նրանց հիմնական կարիքները հոգալու համար:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման գործընկերների և միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից ավելի քան 2 մլրդ. 146 մլն. ՀՀ դրամ է տրամադրվել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ մարդկանց ամենահրատապ ու անհետաձգելի կարիքներին արձագանքելու համար:

Ողջ գործունեությունն իրականացվում է հետևելով հակահամաճարակային կանոններին և նպաստելով դրանց պահպանմանը՝ տրամադրելով տեղեկատվական թերթիկներ և պաշտպանիչ նյութեր:

Following the escalation of the Nagorno-Karabakh conflict cash assistance of AMD 295 million will be provided to the host families to meet their basic needs with the financial support of the ICRC.

The ARCS' partners in the International Red Cross and Red Crescent Movement and International and National organizations provided more than AMD 2 billion 146 million to the Armenian Red Cross to respond to the most urgent and pressing needs of people.

All activities are carried out observing the anti-epidemic measures, encouraging their observance and providing informative leaflets and protective materials.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, մարտ-հոկտեմբեր ամիսների ընթացքում, ըստ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանած պարենային ապրանքների և պաշտպանական միջոցների մեկ ամսվա համար նախատեսված նվազագույն զամբյուղի, սննդով և հիգիենիկ պարագաներով աջակցել է Քովիդ-19 համավարակով պայմանավորված առավել խոցելի 32 136 անձի՝ հանրապետության ամբողջ տարածքում, հասանելի լինելով 925 քաղաքային և գյուղական համայնքներից 792-ում:

Մարդասիրական օգնության փաթեթները Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները հասցնում են շահառուների տներ՝ այդ կերպ պաշտպանելով նրանց վարակից: Աջակցությունը շարունակական է:

Շահառուներն են միայնակ և անժառանգ կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք, սիրիահայեր, մանկատան շրջանավարտներ, տուն ինտերնատների շահառուներ, ինքնամեկուսացվածների, ցուցումով ինքնամեկուսացվածներ, անհայտ կորածների ընտանիքներ, ականներից տուժածներ, բազմազավակ և խոցելի ընտանիքներ:

Մարդասիրական աջակցությունը տրամադրվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված ցուցակներով:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ ռեժիմով՝ ՀՀ Առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ շարունակում են գործել Հայկական Կարմիր խաչի ընկերության Սոցիալ-հոգեբանական աջակցության 2 կենտրոնները, որտեղից հոգեբանները սոցիալ-հոգեբանական աջակցություն են տրամադրում անհանգստություններ ունեցող քաղաքացիներին, այդ թվում՝ մեկուսացված անձանց:

ARMENIAN RED CROSS SOCIETY ACTIVITIES IN RESPONSE TO COVID-19 PANDEMIC

HUMANITARIAN ASSISTANCE

Starting from March 2020, the Armenian Red Cross Societyn in cooperation with the RA Ministry of Labor and Social Affairs, provided food and non-food support to 33 000 most vulnerable people, having access to 792 out of 925 urban and rural communites. Humanitarian aid packages are delivered to the beneficiaries' homes by the volunteers of the Armenian Red Cross Society, to protect them from the virus.

The beneficiaries are lonely and childless elderly people, people with disabilities, Syrian Armenians, graduates of orphanages, care homes beneficiaries, self-isolated people by instruction, families of missing persons, mine victims, multi-children, and vulnerable families.

The list of people receiving humanitarian assistance is provided by the RA Ministry of Labor and Social Affairs.

PSYCHOLOGICAL SUPPORT

ARCS 2 Psycho-social support centers operate in an emergency mode, in cooperation with the MoH and MoLSA, in Yerevan, the capital city, from where ARCS psychologists provide psycho-social support services to civilians with anxieties citizens, including isolated people.

ՀԿԽԸ Թեժ գծի հեռախոսահամարն է 8184:

Մարտի 16-ից Հայկական Կարմիր խաչի ընկերության Թեժ գծի հեռախոսահամարներով ստացվել է 20000-ից ավելի զանգ Երևանից և բոլոր մարզերից, որից 70 տոկոսը՝ սոցիալ-հոգեբանական աջակցության, 26 տոկոսը՝ զուտ հոգեբանական աջակցության, և 4 տոկոսը՝ տեղեկատվության տրամադրման հարցերով:

Բնակչության հետ հետադարձ կապը հնարավորություն է տալիս հայտնաբերելու դժվար իրավիճակում հայտնված մարդկանց, որոշելու նրանց կարիքները և կազմակերպելու, որ կամավորներն այցելեն նրանց և օգնեն աջակցության կարիք ունեցող տարեցներին ու հաշմանդամություն ունեցող անձանց կենցաղային հարցերում, այդ թվում՝ գնումներ կատարելու հարցում: Այս ընթացքում կամավորներն այցելել և օգնել են մոտ 1000 անձի: Դիմողների, հատկապես՝ վարակվածների և մեկուսացվածների հետ տարվող հոգեբանական աշխատանքը ուղղված է հիմնականում անձի հոգեբանական վիճակի կայունացմանը, ինչպես նաև մեկուսացման և սոցիալական շփումների սահմանափակման կանոնների պահպանմանը, ինչն իր հերթին նպաստում է վարակի տարածման կանխմանը: Դիմողների հետ աշխատանքը տարվում է հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, սեռը և ընտանեկան կարգավիճակը:

Իրականացվել է.

· ռիսկի հաղորդակցություն և հանրային իրազեկում (ավելի քան 1 միլիոն մարդ),
· պաշտպանիչ միջոցների տրամադրում (մոտ 1 միլիոն դիմակ, ալկոգել, սփրեյ, ԱՕ արկղիկներ).
· մարդասիրական աջակցություն՝ սնունդ և հիգիենիկ պարագաներ (մոտ 33 000 մարդ).
· թեժ գծի միջոցով սոցիալ-հոգեբանական աջակցություն (ավելի քան 30 000 անձ),
· աջակցություն տնային տնտեսություններին (32 տնային տնտեսություն).
· էլեկտրաէներգիայի (733 անձ), կոմունալ վճարների (11 419 անձ) և բնակվարձերի փոխհատուցում (421 անձ):
· կրթական գործընթացի համար պլանշետների տրամադրում (**500** երեխա):

ARCS hotline number is 8184.

Starting from 16 March, PSS officers and staff responded to more than 25000 calls from Yerevan and regions, from which 70 percent out of which called for applied for psychosocial support, 26 percent – for merely psychological support, and 4 percent were information inquiries.

Contacts with the population and their feedback provide an opportunity to identify people in difficult situations, identify their needs, arrange volunteer visits, help the elderly, and people with disabilities in the household, including shopping. During this time the volunteers visited and helped about 1000 people. Psychological support was provided to the infected and isolated people, and is directed mainly to stabilization of the person's condition, as well as helping to follow the rules of isolation and social distance, which will prevent the spread of the virus. The age and family status of the applicants is being taken into consideration.

Implemented.

· Risk communication and public awareness (over 1 million people),
· Provision of protective equipment (about 1 million masks, alcohol, spray, FA boxes) .
· Humanitarian assistance: food and hygiene items (about 33,000 people).
· Psycho - Social- support through the hotline (more than 30,000 people);
· Support to households (32 households)
· Reimbursement of electricity (733 persons), utility bills (11,419 persons) and rents (421 persons).
· Provision of tablets for the educational process (500 children).

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԱԿԱՆՆԵՐԻՑ ԵՎ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՆՔ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ

Զինված հակամարտությունների թեժ փուլի ավարտից հետո էլ ռազմաճակատի հարևանությամբ, սահմանամերձ համայնքներում ապրող բնակչությունը երկար տարիներ շարունակում է տառապել դրա հետևանքներից:

Գյուղատնտեսական աշխատանքների, զբոսանքի, ճամփորդության ժամանակ մարդիկ վնասվում կամ զոհվում են ականների կամ պայթուցիկ մնացորդների պատճառով:

ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի 109 դպրոցների ավելի քան 280 ուսուցիչներ և աշխատակիցներ անցած մի քանի ամիսների ընթացքում մասնակցեցին հակաականային գործողությունների, ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների տեսակների վերաբերյալ Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից կազմակերպված դասընթացներին: Մասնակիցները ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներ ստացան ականներից և պատերազմի պայթուցիկ մնացորդներից պաշտպանվելու մասին, այլև ծանոթացան իրազեկման և տեղեկատվական միջոցառումներ իրականացնելու գործիքներին և մեթոդներին, ստացան համապատասխան մասնագիտական ուղեցույցներ:

Այնուհետև վերապատրաստված ուսուցիչները և ՀԿԽԸ կամավորները տեղեկատվական դասընթացներ կազմակերպեցին շահառու բոլոր 109 դպրոցների աշակերտների մասնակցությամբ՝ հատուկ շեշտադրում կատարելով բոլոր պայթուցիկ զինամթերքի վտանգի վերաբերյալ հստակ և մանրակրկիտ իրազեկման, ինչպես նաև դրանց ազդեցության և դժբախտ պատահարների թվի նվազեցմանն ուղղված առավել անվտանգ վարքագծային փոփոխությունների ձևավորման վրա:

ՀՀ-ում հաստատված ռազմական դրության շրջանակներում ընթացող գործընթացների համատեքստում աշակերտների և երիտասարդների շրջանում ականների վտանգի վերաբերյալ իրազեկվածությունը և անվտանգ վարքագծային կանոնների ձևավորումն էլ ավելի արդիական է դարձել:

«Պատերազմի պայթուցիկ մնացորդների և ականների վտանգի իրազեկման ծրագիր Հայաստանի Հանրապետությունում» ծրագիրը Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվում է Ականազերծման և ուտիլիզացիայի հիմնադրամի հետ համագործակցությամբ և ՆԱՏՕ-ի աջակցության և գնումների գործակալության ֆինանսավորմամբ:

HOW TO PROTECT AGAINST MINES AND EXPLOSIVE REMNANTS: RAISING AWARENESS OF TEACHERS AND CHILDREN

Following the end of the heated phase of armed conflicts, the population, living in border communities suffer from the consequences for years to come.

During agricultural work, walk, travel, people are injured or killed by mines or explosive remnants of war.

More than 280 teachers and staff of 109 schools from RA Tavush, Gegharkunik, Vayots Dzor and Syunik regions participated in trainings and capacity building activities regarding mine actions, types of mines and explosive remnants of war organized by the Armenian Red Cross Society (ARCS).

Participants not only gained knowledge about how to protect themselves from mines and explosive remnants of war, but also familiarized themselves with appropriate methods and tools for the organization of educational and awareness-rising campaigns and received professional guidance.

The trained teachers by the support and guidance of ARCS volunteer-instructors organized informational sessions with the participation of school students from all 109 beneficiary schools with a special emphasis on provision of clear and complete information of the dangers of all explosive ordnance, as well as on the importance of the formation of safer behavioral changes to reduce the number of accidents.

In the context of the ongoing processes within the emergency state established in the Republic of Armenia, the organization of the awareness raising activities among the school students and youth on the hazards of mines and the development of safe behavioral rules has become even more urgent.

"Explosive Remnants of War and Mine Risk Education Program in the Republic of Armenia" Project is implemented by the Armenian Red Cross Society in cooperation with the Foundation for Demining and Demolition and by the financial support of the NATO Support and Procurement Agency.

ՆՇՎԵՑ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Այս տարի ևս Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Կամավորների միջազգային օրը նշելու, ամբողջ տարվա ընթացքում աչքի ընկած կամավորներին խրախուսելու և ոգևորելու նպատակով նրանց հրավիրել էր Ռեդիսոն Բլյու հյուրանոցի սրահ:

Հայկական Կարմիր Խաչի ընկերության ուժը կամավորներն են: Անգնահատելի է յուրաքանչյուր կամավորի աշխատանքը, նվիրումը, սերն ու ներդրումը, նրանց շնորհիվ է, որ Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել և շարունակում է իրականացնել իր մարդասիրական առաքելությունը:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեց ՀԿԽԸ կամավորների կողմից պատրաստված տեսանյութ, բացի այդ տարբեր ծրագրերում և բաժիններում ներգրավված կամավորներ ներկայացրեցին իրենց գործունեությունը, որին հաջորդեց ամենաակտիվ կամավորներին մրցանակներով պարգևատրումը:

Մրցանակները հանձնեցին ՀԿԽԸ Երիտասարդական բաժնի ղեկավար Կատարինա Վարդանյանը, և Երևանի մարզային մասնաճյուղի գործադիր տնօրեն Նելլի Հայրապետյանը:

Ամենակտիվ կամավորները ստացան խրախուսական մրցանակներ, ՀԿԽԸ վկայականներ՝ «Մարդասիրական ոգի 2020» և «Տարվա առաջնորդ 2020» անվանակարգերում:

CELEBRATING THE INTERNATIONAL VOLUNTEER DAY

This year as well the Armenian Red Cross Society to celebrate the International Volunteer Day and to encourage outstanding volunteers invited them to Radisson Blu hotel hall.

The power of the Armenian Red Cross Society is the volunteers. The work, dedication, love and contribution of each volunteer is invaluable. It is through them that the Armenian Red Cross Society has carried out and continues to carry out its humanitarian mission.

During the event, a video made by ARCS volunteers was shown. Volunteers involved in various programs and departments presented their activities, followed by the awarding ceremony of recognizing the most active volunteers.

The awards were presented by ARCS head of Youth department Katarina Vardanyan and Yerevan Regional Branch Executive Director Nelli Hayrapetyan.

The most active volunteers received encouragement prizes, ARCS certificates in the "Humanitarian Spirit 2020" and "Leader of the Year 2020" nominations.

ՀԱՆՈՒՆ ՈՐԱԿՅԱԼ ԽՆԱՄՔԻ, ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԿՅԱՆՔԻ

2020 թ, նոյեմբերի 12-13-ին ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի խնամող անձնակազմի 41 անդամների համար «Աշխատելով միասին հանուն որակյալ խնամքի, բարեկեցության և արժանապատիվ կյանքի» ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր «Ծերությանը բնորոշ համախտանիշներ և համապատասխան խնամքը» թեմայով հմտությունների զարգացման դասընթաց, որն անցկացրեցին «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիայի» մասնագետները:

Հայկական Կարմիր խաչի ընկերության Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում 2020 սեպտեմբերից մեկնարկել է խնամքի ծրագիրը, որի նպատակն է էապես բարելավել խնամքի կենտրոնի ծառայությունների որակը՝ նվազագույն չափորոշիչների բարելավման և անձնակազմի վերապատրաստման միջոցով: Տեսական բաժնում մասնակիցները ծանոթացան տարեցների հոգեբանական առանձնահատկություններին, նրանց հետ ճիշտ հաղորդակցման սկզբունքներին, սովորեցին ակտիվ լսելու մի շարք հնարքներ, ինչպես նաև փորձարկեցին դրանք գործնականում: Հաջորդիվ ծանոթացան գերիատրիկ՝ ծերությանը բնորոշ համախտանիշներին, ինչպիսիք են սարկոպենիան, ծերունական ասթենիան, անկումները և այլն, իմացան դրանց նշանները և խնամքի կազմակերպման առանձնահատկությունները: Հատուկ անդրադարձ եղավ նաև դեմենցիաներին՝ ծերունական թուլամտությանը, մասնակիցները ծանոթացան ախտանշաններին, տեսակներին, կանխարգելման ուղիներին, ինչպես նաև դեմենցիա ունեցող մարդու խնամքի հիմունքներին, փորձեցին տարանջատել դեմենցիան՝ ծերությանը բնորոշ և բնական համարվող խնդիրներից, սովորեցին ուղեղի աշխատանքը խթանող մի շարք վարժություններ, որոնք կարող են կիրառել ինչպես իրենց համար, այնպես էլ խնամյալների հետ աշխատանքում:

Դեկտեմբերի 1-ից ծրագրի շրջանակներում վերապատրաստված 25 կամավորներ՝ մասնագիտական անձնակազմի անմիջական ղեկավարության և վերահսկողության ներքո, ամենօրյա աջակցություն են ցուցաբերում ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի խնամքի թիմին. օգնում են խնամյալներին տեղաշարժվել, խոհանոցից սնունդ վերցնել և այլն: Կամավորները Կենտրոնի բնակիչներին աջակցում են ինչպես հաստատության ներսում, այնպես էլ դրսում՝ բժշկական հաստատություններ այցերի և սոցիալական տարբեր միջոցառումների ժամանակ: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ և Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ և տևելու է մինչև 2023 թվականի հուլիսը:

FOR QUALITY CARE, WELL-BEING AND A DIGNIFIED LIFE

On November 12-13, in the frames of the "Working together for quality care, well-being and a dignified life" project, a two-day training session was organized and conducted by trainers of the Armenian Association of Geriatrics and Gerontology, for 41 care and project staff.

Armenian Red Cross launched a new program to improve care quality in Gyumri 24-hour Care Center starting from September 2020. The goal of the project is to significantly improve the quality of ARCS Gyumri's 24-hour care center through improved minimum standards and staff trainings. In the theoretical part, the participants got acquainted with the psychological features of the elderly, the principles of correct communication with them, learned a number of tricks of active listening, as well as tried to practice them in the practical part of the training. Next, participants got acquainted with the geriatric syndromes typical of old age, such as sarcopenia, senile asthenia, relapses, etc., learned their symptoms, and the peculiarities of the organization of care. Special mention was made of dementias. Participants were introduced to the symptoms, types, ways of prevention, as well as the basics of care for a person with dementia, tried to separate dementia from the natural problems of old age, learned a number of brain-stimulating exercises that can be used by both caregivers and beneficiaries.
Careful application of the principles of biomechanics to the safety of both the caregiver and the beneficiaries is crucial in caregiving work. Participants learned the rules of body movements, the basic positions needed to care for a bedridden patient, and the skills of sitting, changing the position in bed, lying down skills, which are essential for preventing bed sores.

Starting form December 1, 25 trained volunteers within the framework of the program have been providing day-to-day support to the ARCS Gyumri's 24-hour care center under the direct support and supervision of professional staff. They help the residents to get up, move, get food from the kitchen, etc. The residents of the center are supported both inside and outside the institution, during visits to medical centers or during various social events organized outside the center.
The Program, which will last till July 2023, is being implemented with the financial support of the Austrian Development Agency and in cooperation with the Austrian Red Cross.